«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆ

N 148
« 13 »« 09»« « 2021 »թ.

Գեղարքունիքի մարզ գ. Գեղամասար,հեռ. 093250099, էլ.փոստ geghamasar@schools.am

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ
Տեղեկացնում եմ Ձեզ, որ կազմակերպության դասվար (21 դասաժամ), քիմիա (12 դասաժամ) և ռուսաց լեզու (10 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթները կկայանան 2021 թվականի սեպտեմբերի 24-ին, ժամը 14^{00}-ին: (Հայտարարությունը հրապարակվել է <<Կրթություն>> շաբաթաթերթի 38(1011)-րդ համարում (08.09.2021թ.)
Կից ներկայացնում եմ հատարարության տեքստը:
Առդիր 1 թերթ

Տնօրեն՝ Ա. Բարսեղյան

Digitally signed by BARSEGHYAN ASHOT 2614710237
Date: 2021.09.13 16:18:42 AMT

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (21 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ) և ռուսաց լեզվի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոցում:

Տեկությունների համար զանգահարել՝ (093) 25-00-99 հեռախոսահամարով: